

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**<<ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ>>**

Հոդված 1. <<Ազգային անվտանգության մարմիններում ծառայության
մասին>> Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 11-ի
ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

- 1) 3-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<վարչապետը>> բառով,
- 2) 4-րդ մասում <<Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան առաջարկությամբ>> բառերը փոխարինել <<Կառավարությունը>>
բառով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում <<սպայական կոչումները շնոր-
հում է Հայաստանի Հանրապետության Նախագահը>> բառերը փոխարինել
<<զինվորական կոչումները շնորհում է Հայաստանի Հանրապետության
Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի
առաջարկությամբ>> բառերով:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրու-
թյամբ.

<<2. Պետական լիազոր մարմնի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի
նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչա-
պետը:>>:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ և 6-րդ գլուխներն ուժի մեջ մտնելու օրվանից: